Վաղարշապատի բոլոր պաշտօնատար անձինք և պատուաւորք։ Ինքը Նորին Օծութիւնը հասարակաց սեղանն իջաւ ճաշելու։ Հայրապետի գմբեթազարդ Աթոռը զարդարած էր գորգերով ու ծաղիկներով։ Ճաշի ժամանակ Նորին Օծութիւնն բարեմաղթութիւն անելով առաջարկեց Նորին մեծութեան Թագաւոր Կայսեր և բոլոր ընտանեաց կենաց, Ս. Էջմիածնի Հաստատութեան և Հայ ազգի բարօրութեան բաժակներն, որոնք դարտակուեցան կեցցէներով. իւրաքանչիւր բաժակի ժամանակ երգեցիկ խումբը երգում էր յարմարաւոր օրհներգ և շարական։ Շնորհունակ Կիւրեղ վարդապետ Սրապեանը խօսեց ճառ, որով ցոյց տուեց, որ Ս. Աթոռոյս միաբանութեան վերայ պարտք կայ ազգը սերտութեամբ կապելու Ս. Աթոռի հետ և մաքառելու այն անտարբերութեան դէմ, որ տակաւ առ տակաւ սպրդում է ժողովրդի մէջ։

Սեղանի վերջում Մկրտիչ Ս. Արքեպիսկոպոսն առաջարկեց Նորին Օծութեան կենաց բաժակը մաղթելով առողջ ու երկար կեանք և յաջողութիւն ՀԵՌՆարկութեանց մէջ։ Բաժակը կեցցէներով դարտակուեցաւ. յոտնկայս։

Երեկոյեան կրկին ճրագալոյց էր Տաճարի բակում և հրախաղութիւնք. երգեցիկ խումբը երգում էր ազգային երգեր։ Բազմութիւնը խուռն էր։ Երկու երեկոյ էլ Տաճարի մեծ կաթուղիկէի խաչը լուսաւորուած էր գոյնզգոյն լապտերներով։

ՀԱՇԻՒ ԵԼԵՒՄՏԻՑ

Հայուհեաց բարեգործական ընկերութեան Թիֆլիզում, սկսեալ 1 մարտի 1889 թ. ցն յունվարի 1890 թ.

ՄՈՒՏՔ.

Ունցեալ դարձանից մնացած է՝

1) Տոկոսաբեր արժէտոմսեր ի գումարի . . .	10268	40
2) Ընթացիկ հաշիւ առևտրական բանկում . . .	1958	68

3)	Առձեռն գանձարանում	373	40
		12600	84

Սոյն տարի ստացել է՝

1)	Նուիրաբերութիւններ՝		
	Բագուաբնակ Եղիսաբէթ Սարգսեանից ի յիշատակ հանգուցեալ իւր ամուսնոյ	400	
	Տ. Դարեա՝ Յովհաննէսեանից ի յիշատակ վաղամեռիկ իւր որդւոյ	25	
	Անյայտ անձինքներից	48	50
2)	161 իսկական անդամներից	966	
	6 մշտական անդամներից	600	
3)	Պարահանդէսից վիճակախաղով . . .	821	58
	Ներկայացումից	700	25
	Պ. Բաբայեանցի դասախօսութիւնից . . .	42	
4)	Տոկոսիք ընթացիկ հաշուից	59	33
	» արժէքոնեներից	611	
5)	Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի աշակերտուհիներից ուսումնական պիտոյքների վճար	92	
	Նոյն եկեղեցւոյ երեցփոխանից	25	
6)	Կարուձևի դպրոցի արդիւնք	610	88
	Գումար	5001	54
	Բոլորը . .	17602	28

ԵԼՔ.

1)	Դիւանական և մանր ծախսեր	113	89
2)	Նուիրատուութիւնք՝		
	Յոգուտ չքաւոր ուսանողաց ուսման վճար . .	18	
	» Զ.րկենեանց եկեղեցւոյ ուսումնարանի . .	50	
	» Նորաշէնի եկեղեցւոյ ուսումնարանի . .	50	
	Զրօրհնէքին և զատկին բաժանուեցաւ չքաւոր անձանց և ընտանեաց	200	
3)	Ս. Նշան եկեղեցւոյ դպրոցի պահպանութիւնը . .	2048	58
4)	Սոյն դպրոցի շինութեան նորոգութիւնը . . .	136	70
5)	Կարուձևի դպրոցի պահպանութիւնը . . .	1660	19
6)	Թիֆլիսի դատաստանական պալատի վճռով վճարուեցաւ Սերեբրէկեանի կտակաւոր գումարից . .	68	
	Գումար	4345	

Ընկերութիւնն ունի՝

Տոկոսաբեր արժէքներ	10458	84
Ընթացիկ հաշիւ. առևտրական բանկում . . .	2497	33
Առձեռն գանձարանում	300	75
Բոլորը	17602	28

Բացի սորանից երեք հատ օսմանեան արծաթոյ դրամ, դպրոցական կահկարասիք և այլ իրեր։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՔԱՂՈՒԱԾՔ ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԴԻՍ.

Շրջաբերական կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս ի 28 ապրիլի յանուն Թեմական Առաջնորդաց Հայոց Ռուսաստանի, որով պատուիրէ ազդ առնել ամենայն վարչութեանց եկեղեցական—ծխական ուսումնարանաց Հայոց Թէ՝ ի վերայ կրօնական ուղղութեան ուսումնարանաց այնոցիկ տեղեաց, յորոց հեռի է Փոխանորդն, պարտաւոր են հսկել գործակալ քահանայք, ստանձնելով զայն ամենայն պարտաւորութիւնս և իրաւունս, զորս տրամադրէ 17-րդ յօդուածն կանոնաց եկեղեցական-ծխական ուսումնարանաց Հայոց վերաբերութեամբ փոխանորդաց։

Կոնդակ Վեհափառ Հայրապետի ազգիս յ2ն մայիսի ընդ համարաւ 182, որով ընդարձակէ զիրաւունս Գեր. Փոխանորդի Թեմական Հայոց Երևանայ բանալ ի Փոռ և յՈւզուն—Քիլիսա գիւղս զեկեղեցական—ծխական միդասեան ուսումնարանս տղայոց, հաստատելով ի պաշտօն հոգաբարձութեան վասն առաջնոյն՝ զբարեկրօն Պօղոս քահանայն Տէր Ստեփանեան, զերեցփոխան եկեղեցւոյ տեղւոյն և զյարգելի Աւետիսն Միրզիզեանց և անձնափոխանորդ՝ զպատուելի Ցարութիւնն Բաբադիւլեանց. իսկ վասն երկրորդի՝ զբարեկրօն Ցարութիւն քահանայն Տէր Կարապետեան, զերեցփոխան